

Արձանագրություն №1/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած թիվ 1 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 70-ը (յոթանասունը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը:

Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը, ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը գիտական խորհրդի անդամներին տեղեկացրեց Արցախի դեմ սանձազերծված պատերազմի շրջանակում ԵՊՀ-ի օգնության ու իրականացվող գործողությունների մասին: Նա նշեց, որ ԵՊՀ-ն միացել է Հայաստան համահայկական հիմնադրամի «Մենք ենք մեր սահմանները. բոլորս Արցախի համար» համագգային արշավ-դրահամահավաքին և հատուկ բացված հաշվեհամարին փոխանցել 20 մլն դրամ: Կոչ արվեց դրամահավաք-արշավին միանալ նաև անհատապես, ֆակուլտետների և ստորաբաժանումների մասնակցությամբ: Գ. Գևորգյանը տեղեկացրեց, որ ուսանողական խորհրդի կողմից հավաքված օգնության առաջին խմբաքանակն արդեն հասել է Արցախ 17 կամավորների հետ միասին, համալսարանի ավտոբուսները տրամադրվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը: Պատրասկամություն է հայտնվել ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնասիրտադրական բազան, հանրակացարանը ըստ անհրաժեշտության տրամադրել Արցախից տեղափոխված հայրենակիցներին: Համալսարանի ուսանողները և աշխատակիցները նյութական, առաջին անհրաժեշտության, տարբեր իրերի կարիքների ապահովման նպատակով կազմակերպել է նյութական ապահովման ու հավաքագրման ակցիա: ՀՀ ՊՆ-ին առաջարկվել է նաև հոգեբանական աջակցություն զինձառայողների և քաղաքացիական անձնաց համար: Գ. Գևորգյանը հայտնեց նաև, որ կոչ է ուղղել համալսարանի միջազգային գործընկերներին՝ տեղեկացնելով Արցախի դեմ թուրք-ադրբեջանական ագրեսիայի ու ջիհադական վարձկանների ներգրավվածության մասին:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը առաջարկեց օրակարգում ընդգրկել Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլիին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումից զրկելու մասին հարցը՝ նշելով, որ նման կոչեր, առաջարկներ եղել են համալսարանական և արտահամալսարանական շրջանակներից:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը առաջարկված լրացմամբ.

1. Միխեիլ Սասկաշվիլիին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումից զրկելու մասին
2. ԵՊՀ գիտական խորհրդի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ գիտքարտուղար Լ.Ս. Հովսեփյան)
3. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ գիտխորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահներ Ն.Ն. Մարտիրոսյան, Խ.Վ. Ներկարարյան)
4. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ.Գ. Ժամհարյան)
5. Բակալավրի և մագիստրոսի նոր կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է.Ս. Գևորգյան)
6. Հաղորդում 2020-2021 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ հումանիտար և հասարակագիտական մասնագ. գծով պրոռեկտոր Է.Վ. Ասրիյան)
7. Հաղորդում ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների մասին (զեկ.՝ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա.Ս. Բուդաղյան)

Ընթացիկ հարցեր

8.1. Երվանդ Օտյանի և Լևոն Շանթի ծննդյան 150-ամյակներին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն (խմբագիր՝ պրոֆեսոր Մամվել Մուրադյան) հրատարակության երաշխավորելու մասին:

8.2. «Հայ նոր գրականության պատմություն» (Ա հատոր) (հեղ.՝ Բ.Գ.Գ., պրոֆ. Ս. Մուրադյան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

8.3. «Հնագույն Իրանի պատմություն (Էլամ, Մարաստան)» աշխատանքը (հեղ.՝ պ.գ.դ., դոցենտ Հ. Հարությունյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

8.4. «Русский язык (для отделений французского языка вузов Армении) աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Պ., դոցենտ Անուշ Հակոբյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՍՆ-ին միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին – Միխեիլ Սաակաշվիլիին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումից զրկելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց որոշման հիմնավորումը, ըստ որի՝ Մ. Սաակաշվիլիի կողմից Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանա-թուրքական ռազմական ագրեսիան առերևույթ արդարացնելու նպատակով հակահայկական հայտարարություններ անելը, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի և հայ ժողովրդի ազգային շահերի նկատմամբ կողմնակալ ու բացահայտ անհարգալից վերաբերմունքն անընդունելի ու մերժելի է:

Որոշեցին.-

1. Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Նիկոլոզի Սաակաշվիլիին զրկել «Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի» կոչումից
2. Անվավեր ճանաչել ԵՊՀ գիտական խորհրդի 2009թ. հունիսի 25-ի որոշումը և թիվ 60 կոչման վկայականը:

Որոշումն ընդունվեց միաձայն:

2.Լսեցին.- գիտական խորհրդի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատման մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ ներառված հարցերը հիմնականում պլանային են և ընդգրկված է թվով 16 հարց:

Որոշեցին.- հաստատել գիտական խորհրդի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

3.Լսեցին.- դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ.

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | ՊԱՇՏՈՆԸ |
|-----|---------------------------------|--------------------------------------------------------------------|
| 1. | Ալեքսանյան Միքայել Սերյոժայի | Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի ասիստենտ |

| | | |
|----|------------------------------|----------------------------------------------------------------|
| 2. | Վարդանյան Իշխան Վոլոդյայի | Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ |
| 3. | Սաղաթեյան Սոնա Կարենի | Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ |
| 4. | Բալասանյան Սոնա Արմենի | Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ |
| 5. | Սարգսյան Առնակ Գեորգիի | Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ |

Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց առցանց, փակ գաղտնի քվեարկության արդյունքները.

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ |
|-----|---------------------------------|------|-----|
| 1. | Ալեքսանյան Միքայել Սերյոժայի | 56 | 1 |
| 2. | Վարդանյան Իշխան Վոլոդյայի | 57 | 0 |
| 3. | Սաղաթեյան Սոնա Կարենի | 56 | 1 |
| 4. | Բալասանյան Սոնա Արմենի | 56 | 1 |
| 5. | Սարգսյան Առնակ Գեորգիի | 54 | 3 |

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

4.Լսեցին. – ԵՊՀ 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց, որ ընթացիկ կիսամյակում ֆակուլտետներից ներկայացվել է 57 թեկնածու 54 անուն կրթաթոշակի համար, քանի որ 3 կրթաթոշակ 2-ական տեղ ունեն: Ներկայացվածներից 32-ը նոր հավակնորդներ են, որից 24-ը մագիստրատուրայի, 5-ը բակալավրիատի 3-րդ, իսկ 28-ը բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողներ են:

Որոշեցին. – հաստատել ԵՊՀ 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

Որոշումն ընդունվեց միաձայն:

5.Լսեցին. – բակալավրի և մագիստրոսի կրթական նոր ծրագրերի հաստատման մասին: Գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյանը տեղեկացրեց, որ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական

հանձնաժողովի նիստում քննարկվել են ներկայացված 3 կրթական ծրագրերի հարցը, որոնցից 2-ը բակալավրի, 1-ը՝ մագիստրոսական: Ներկայացված ծրագրերն են՝

«Հասարակայնության հետ կապեր» (Մոցիոլոգիայի ֆակուլտետ, բակալավրիատ)

«Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» (Կենսաբանության ֆակուլտետ, բակալավրիատ)

«Թարգմանություն զբոսաշրջային տիրույթում. անգլերեն-հայերեն» (Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, մագիստրատուրա):

Ըստ նրա՝ բոլոր կրթական ծրագրերը անցել են կրթական ծրագրերի ընդունման և հաստատման համար անհրաժեշտ ողջ ընթացակարգերը, արտաքին և ներքին փորձաքննություն և ստացել երաշխավորություն:

Որոշեցին.՝ Հաստատել բակալավրի և մագիստրոսի կրթական հետևյալ ծրագրերը՝

«Հասարակայնության հետ կապեր» (Մոցիոլոգիայի ֆակուլտետ, բակալավրիատ),

«Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» (Կենսաբանության ֆակուլտետ, բակալավրիատ),

«Թարգմանություն զբոսաշրջային տիրույթում. անգլերեն-հայերեն» (Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, մագիստրատուրա):

Քվեարկության արդյունքները՝ կողմ 62, դեմ 0, ձեռնպահ 2:

6.Լսեցին.՝ հաղորդում 2020-2021 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին: Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Մարիյանը ներկայացրեց, որ ԵՊՀ բակալավրիատ ընդունվել է 2687 ուսանող, որից 1661-ը հումանիտար և հասարակագիտական, 1026-ը բնագիտական և ճշգրիտ մասնագիտությունների գծով: ԵՊՀ ընդունվածների թիվը կազմում է ընդհանուր հայաստանյան բուհական համակարգ ընդունվածների մոտ 30 տոկոսը: ԵՊՀ ընդհանուր դիմորդների թիվը կազմել է 4066: Մագիստրատուրայի դիմորդների թիվը կազմել է 1227, որից ընդունվածների (հրամանագրվածների) թիվը 968 է: Ընդհանուր հայտարարված էր 110 կրթական ծրագրի վերաբերյալ ընդունելություն, որից 70-ը բացվել են բավարար ընդունվածների քանակով, 22-ը՝ ոչ բավարար ընդունվածների քանակով, իսկ չբացված կրթական ծրագրերի թիվը կազմել է 18: Ընդհանուր ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի 2020-21 ուստարվա առկա ուսուցմամբ ընդունվածների թիվը կազմել է 3655: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը որպես լրացում նկատեց, որ ընդունելության կատարողականը բարձր է նախորդ տարիների համեմատ չնայած փաստացի ընդունվածների թվի պակասին, որից սակայն որակը չի տուժի, քանի որ չեն ընդունվել ցածր միավորներով դիմորդները տեղերի նվազեցման պատճառով:

Որոշեցին.՝ ԵՊՀ 2020-2021 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

7.Լսեցին.՝ հաղորդում ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների մասին: Որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյանը նշեց, որ նախորդ ուստարվա ընթացքում կատարվել են գործընթացի իրականացման լայնածավալ աշխատանքներ հատկապես ֆակուլտետներում: Մոնիթորինգին մասնակցել են բոլոր 19 ֆակուլտետները, 3 կենտրոնները և 2 ինստիտուտները: Ընդհանուր իրականացվել է 100 մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգ, որից 90-ի հետ կապված իրականացվել են ֆոկուս-խմբային

աշխատանքներ, որն առաջին անգամ էր անցկացվում: Ըստ նրա՝ այդ գործընթացն առաջին հերթին ստուգում է կրթական ծրագրերի մատուցման որակը, նրանց շարունակական բարելավման հիմնական գործիք է և ինքնագնահատման կարևոր բաղադրիչ է ուսումնական ստորաբաժանումների համար: Դա նաև պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում գործընթացի ստուգում-բարելավում շրջափուլի ապահովումն է: Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի նոր նախագծով այդ գործընթացն էական հիմք է հանդիսանալու կրթական ծրագրերի որակի արտաքին ապահովման, մասնավորապես հավատարմագրման գործընթացի համար արժանահավատ հիմքերի տրամադրման տեսանկյունից: Ա. Բուդաղյանը նշեց, որ մոնիթորինգի գործընթացի վերաբերյալ ՈԱԿ-ի համահավաք զեկույցները և դրանց առնչվող նկատառումները տրամադրվել են նախօրոք գիտական խորհրդի անդամներին, ուստի համառոտ ներկայացրեց որոշ ընդհանրական կետեր, որոնք արտացոլված են ուսանողների ֆոկուս-խմբային հարցումների արդյունքներում: Ուսանողները անդրադարձել են ուսումնական գործընթացի իրականացման բոլոր բաղադրիչներին: Առաջին խնդիրը թեզերի թեմաների ընտրությունն է՝ ընտրության ժամկետների, շատ դեպքերում հետազոտական բաղադրիչի բացակայության մասով: Մյուս կարևոր խնդիրը վերաբերում է հատկապես մագիստրատուրայում ծրագրերի բովանդակությանը, բակալավրի և մագիստրոսի ծրագրային կրկնություններին, տեսական նյութի գերակայությանն ու պրակտիկ գիտելիքների պակասին և այլն: Հաջորդ խնդիրը դասավանդման մեթոդներն են, հաճախ արխայիկ և ավանդական, նույնիսկ թելադրությամբ իրականացվող դասախոսությունների գերակայությունը և նորարարական մեթոդների պակասը: Գնահատման հետ կապված հիմնական ցանկությունը գրավոր քննությունների հնարավոր փոխարինումն է ինքնուրույն, խմբային աշխատանքներով, էսսեների միջոցով գնահատման: Ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված խնդիրները առնչվում են դասընթացների անհամաչափ բաշխմանը, ոչ ճկուն գրաֆիկներին, 2-րդ հերթափոխին և այլ մասնագիտություններից մագիստրատուրա եկած ուսանողների ինտեգրման խնդիրներին, ուսումնական գրականության արդիականության, հայալեզու գրականության առկայության, տեխնոլոգիական ռեսուրսների սղության և այլն: Ըստ նրա՝ ֆակուլտետներից ստացված մոնիթորինգի զեկույցների արդյունքների համաձայն՝ հիմնականում բացակայում էին շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները, մեծամասամբ նաև ուսանողների և շրջանավարտների նախորդ 2 տարիների հարցումների արդյունքների վերլուծությունը: Զեկույցներում նկատվող մյուս թերությունն այն է, որ ֆոկուս-խմբային հետազոտությունների արդյունքները հաճախ հաշվի չեն առնվում SWOT վերլուծություններում, իսկ դա հաճախ արվում է մակերեսային: Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Ասրիյանը հետաքրքրվեց, թե քանի՞ ծրագրեր են գտնվում ռիսկային գոտում և քանիսը կարող են գնահատվել լավ կամ գերազանց: Ի պատասխան Ա. Բուդաղյանը նկատեց, որ ըստ ֆակուլտետների ներկայացրած զեկույցների և սահմանված չափանիշների ռիսկային գոտում գտնվող ծրագրեր չկան: Բոլոր ծրագրերն էլ բավարարում էին սահմանված մինիմալ չափանիշներին, սակայն պետք է քայլեր ձեռնարկվեն մոնիթորինգի արդյունքում բարելավման գործընթացի ուղղությամբ: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ առաջին

անգամ նման մեծ աշխատանք է կատարված, և անհրաժեշտ է արդյունքները վերլուծել և շտկել առկա թերությունները, ինչպես օրինակ՝ դասավանդման մեթոդների կիրառման հարցում: Կան թերություններ, որոնց շտկման համար ավելի մեծ աշխատանք է պահանջվում, ուստի պետք է դրանք քայլ առ քայլ իրականացնել:

Որոշեցին. - ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

8.1.Լսեցին. – Երվանդ Օսյանի և Լևոն Շանթի ծննդյան 150-ամյակներին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն (խմբ.՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս. Մուրադյան) հրատարակության երաշխավորելու մասին:

Որոշեցին. Երվանդ Օսյանի և Լևոն Շանթի ծննդյան 150-ամյակներին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն (խմբ.՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս. Մուրադյան) երաշխավորել հրատարակության:

8.2.Լսեցին. - «Հայ նոր գրականության պատմություն» (Ա հատոր) աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս. Մուրադյան) որպես ուսումնական ձեռնարկ հրատարակության երաշխավորելու մասին:

Որոշեցին. - «Հայ նոր գրականության պատմություն» (Ա հատոր) աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս. Մուրադյան) որպես ուսումնական ձեռնարկ երաշխավորել հրատարակության:

8.3.Լսեցին. - «Հնագույն Իրանի պատմություն (Էլամ, Մարաստան)» աշխատանքը (հեղ.՝ Կ.Գ.Պ., դոցենտ Հակոբ Հարությունյան) հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - «Հնագույն Իրանի պատմություն (Էլամ, Մարաստան)» աշխատանքը (հեղ.՝ Կ.Գ.Պ., դոցենտ Հակոբ Հարությունյան) աշխատանքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

8.4.Լսեցին. - «Русский язык (для отделений французского языка вузов Армении)» աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Պ., դոցենտ Անուշ Հակոբյան) հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - «Русский язык (для отделений французского языка вузов Армении)» աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Պ., դոցենտ Անուշ Հակոբյան) երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

Օրակարգային հարցերի սպառումից հետո ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ նոր տիպի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված նախորդ կիսամյակում որոշում էր կայացվել չեղարկել ընթացիկ քննությունները, սակայն ընթացիկ կիսամյակի համար առաջարկեց ընթացիկ քննությունները անպայման անցկացնել, սակայն 1 շաբաթով հետաձգել, ինչը պայմանավորված է կիսամյակի դասերը 2 շաբաթ ուշ սկսելու հանգամանքով: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանն առաջարկեց ընթացիկ քննությունների անցկացման ժամկետի հարցում սպասել, քանի որ շատ ֆակուլտետներից կամավոր մեկնել են Արցախի կամ պատրաստվում են, ուստի ճիշտ

կլինի դեռ սպասել: Գ. Գևորգյանը նշեց, որ խոսքը գնում է քննությունները պարտադիր անցկացնելու և 1 շաբաթով հետաձգելու մասին՝ կարևորելով դրանց անցկացման ձևերի հստակեցման հարցը: Ֆակուլտետների ղեկաններին առաջարկվեց մտածել քննությունների անցկացման ձևերի մասին՝ առաջարկելով օրինակ դրանք անցկացնել համալսարանում սահմանված հերթափոխերով: Գ. Գևորգյանը խնդրեց որքան հնարավոր է դասերը անցկացնել հեռավար՝ համավարակի տարածման տեմպերը չմեծացնելու նպատակով: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկան Ա. Սահակյանն առաջարկեց 2-ի փոխարեն անցկացնել 1 ընթացիկ քննություն, տրամադրել 2 շաբաթ և անցկացնել համալսարանում:

Գիտական խորհրդի սովորող անդամ Ն. Մարգարյանը հետաքրքրվեց, թե ուսանողների՝ որպես կամավոր ռազմական գործողություններին մասնակցելու համար Արցախ մեկնելու պատճառով խաթարված դասապրոցեսի հետ կապված ի՞նչ լուծում պետք է տրվի: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ որքան հնարավոր է դասապրոցեսը պետք է իրականացվի, իսկ բացթողումների համար կգտնվեն համապատասխան լուծումներ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

09.10.2020թ.